ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝
ՊԱՐՈՆ ՍԵՐԳՈ ԵՐԻՑՅԱՆ

Մեծարգո Պարոն Նախարար,

Մելգոնյան Կրթական Հաստատության Շրջանավարտների և Մելգոնյան Ինտեռնացիոնալի անունից խնդրվել էր Ձեզ հետ խորհրդակցել, Հ.Բ.Ը.Մ.ի կողմից Մելգոնյան Կրթական Հաստատությունը փակելու որոշման պատճառած անցանկալի հետևանքները կանխելու մտահոգությամբ:

Տեղեկացանք, որ Ձերդ մեծապատվությունը արդեն իսկ իմացել է այդ մասին, ոչ թէ միայն Ձեր տրամադրությանը հանձնված նամակագրություններից ու մեկնաբանություններից, այլև՝ Մելգոնյան սաների ծնողների նամակներից:

Գնահատելով հանդերց Ձեր հետեվողականությունը, չենք կարող անտարբեր մնալ Ձեր լռության նկատմամբ, որի պատճառները որքան էլ արդարացի լինեն Ձեր կողմից, այդքան էլ անընդունելի և անհանդուրժելի են մեր կողմից: Որպես Մելգոնյանցիներ, երբ դիմում էինք Ձեզ, մի նպատակ էինք հետապնդում, որն էր՝ արժեվորել Հայրենի Բարձրագույն Օղակներից Կրթության և գիտության Նախարարության վարկը, հանձինս նրա նորանշանակ Նախարարի, որի անունը դեռևս թարմ էր մնացել մեր հիշողությունների մեջ, Սփյուռքյան գաղութներ ու գաղթօջախներ իր հետախուզական շրջագայություններով, որպես ժուռնալիստ և նկարահանող:

Ձեր «բազմազբաղության» կողքին, չենք կարող նաև չգնահատել Ձեր անաչառ նվիրումը Կրթությանն ու Գիտությանը, որոնց նկատմամբ դեռ շատ մեծ աշխատանքներ են պետք տանել, Սփյուռքյան Կրթօջախների կարգապահողությունն ու ազգային դաստիարակությունը տեսնելուց հետո: Եթե սրանք էին Ձեր ծանրաբեռնվածության պատճառները, հավատացեք որ մենք հազար ներողություն կխնդրեինք Ձեզանից և չէինք փորձի անհանգստություն պատճառել Ձեզ: Սակայն, մոռանում էք, որ մեր դիմումի և «Պերճ Սեդրակյանի Երեվան այցելության» միջև զուգահեռներ անցկացնելու Ձեր փորձը ամենեվին ել չի բխում Հայրենիք-Սփյուռք շահերից, մանավանդ՝ երբ հաշվի առնվի մեր հասարակության մեջ Պարոն Սեդրակյանի կարգավիճակը, որպես «persona non grata»:

Հավատացեք, որ Պերճ Սեդրակյանի հետ նախատեսված Երեվանյան խորհրդակցությունում, Ձեր մասնակցությունը առավելագույնս կարող է լինել ԼՍՈՂի կարգավիճակով, որից ավելին չենք ել կարող ակնկալել, ոչ թե դերագնահատելով ցեր անձը, այլ՝ գերագնահատելով Ձեր պաշտոնը:

Հուսանք ,որ այս այցելությունն ել համապատասխան մեծարանքի կարժանանա, և խոստացվելիք նորանոր «բարեգործություններից» մի արդար բաժին ել կհասնի Ձեզ, հոգ չե եթե նոյնիսկ այդ ձեռք բերված լինի Մելգոնյան Կրթական Հաստատությունը

Վաճառելով: Բայց, հիշեցնենք նայև որ ժամանակները փոխվել են, և տա աստված որ «ազգապահպանման» պիտակի տակ թողարկվող նորանոր խոստումները ըստ արժանվոյն բաշխվեն, շուկայական հարաբերությունների այս խելացնոր ժամանակներում:

Իսկ, վերադառնալով մեզ խոստացված ընդունելությանը, այդ մասին կարելի է չանհանգստանալ և չշտապել, թողնելով «բարեգործական ապրանքանիշ»ների թողարկումից հետո, անշուշտ եթե մի օր ել մեր ապրանքանիշների կարիքը ունենաք:

Մելգոնյանցի